

**ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
 ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
 Հիմնադրամի հոգաբարձուների
 խորհրդի 07-08-2023 թ. որոշմամբ
 «Ա.Ի.ԱԼԻԽԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ (ԵՐԵՎԱՆԻ ՖԻԶԻԿԱՅԻ
 ԻՆՍՏԻՏՈՒՏ)»
 Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
 հիմնադրամի 2022 թ. գործունեության մասին**

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը	«Ա.Ի.ԱԼԻԽԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ (ԵՐԵՎԱՆԻ ՖԻԶԻԿԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ)»	
1.2 Գտնվելու վայրը	ԵՐԵՎԱՆ ԱԶԱՓՆՅԱԿ ԱԶԱՓՆՅԱԿ ԹԱՂԱՄԱՍ ԱԼԻԽԱՆՅԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐԻ 2	
1.3 Պետական գրանցման համարը	222.160.01345	
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը	2011-12-06	
1.5 ՀՎՀՀ-ն	01202364	
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)	+(374)91360515	
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը	www.aanl.am	
1.8 Էլեկտրոնային փոստը	a.baghramyan@yerphi.am	
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
Հայաստանի Հանրապետության կառավարություն		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
Ռուբեն Մկրտչյան		
Հրայր Մարության		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Անի Ապրահամյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	341	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը		
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ		
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
	Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագրի իրականացման համար դրամաշնորհ	767,320,800

	Գիտական աստիճան ունեցող աշխատակիցներին վճարվող հավելավճարի պայմանագիր	39,775,000
	Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային թեմաների իրականացում	490,918,000
	Գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերում թեմաներում ընդգրկված բարձր արդյունավետությամբ աշխատող գիտաշխատողների հավելավճար	16,675,000
	Գիտական կադրերի պատրաստում և ասպիրանտական կրթաթոշակ	1,759,000
	Միջազգային գիտական համագործակցություն ծրագիր	11,880,000
	դրամաշնորհ ԿԳՄՍ կրթ. ծախսերի փոխհատուցում	3,138,500
	Բարձրագույն որակավորման կոմիտեի դրամաշնորհ	113,000
	Գիտական միջոց ցառումների կազմակերպման աջակցություն	650,000
	դրամաշնորհ ԿԳՄՍ կրթ. ծախսերի փոխհատուցում	2,753,400
	Ձեռնարկատիրական գործունեությունից եկամուտ	3,650,500
	Գիտական հետազոտական և ուսումնասիրման աշխատանքների դիմաց	14,000,000
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Միջազգային համագործակցությունից ֆինանսավորում	58,263,250
	Ձեռնարկատիրական գործունեությունից եկամուտ	150,497,355
	Այլ եկամուտներ	15,875,027
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ		
9.2 Գույք		9.2.1 Տեսակը
		9.2.2 Արժեքը
10. Նվիրատվություններ/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	

Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագրի իրականացման համար դրամաշնորհ	767,320,800
Գիտական աստիճան ունեցող աշխատակիցների վճարվող հավելավճարի պայմանագիր	39,775,000
Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային թեմաների իրականացում	584,914,464
Գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերում թեմաներում ընդգրկված բարձր արդյունավետությամբ աշխատող գիտաշխատողների հավելավճար	16,375,000
Գիտական կադրերի պատրաստում և ասպիրանտական կրթաթոշակ	1,700,358
Միջազգային գիտական համագործակցություն ծրագիր	14,127,984
դրամաշնորհ ԿԳՄՍ կրթ. ծախսերի փոխհատուցում	2,833,000
Միջազգային համագործակցությունից ֆինանսավորում	36,315,380
Բարձրագույն որակավորման կոմիտեի դրամաշնորհ	332,000
Գիտական միջոց ցառումների կազմակերպման աջակցություն և	465,820
դրամաշնորհ ԿԳՄՍ կրթ. ծախսերի փոխհատուցում	2,749,000
Սարքավորման ծրագիր	26,096,300
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	1,663,981,000
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	1,493,005,106

Նշումներ՝

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ 30 էջերից:
էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____
ստորագրությունը, անունը, ազգանունը



Audit
ARMENIA

**«Ա.Ի.ԱԼԻԽԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿԱՆ
ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ (ԵՐԵՎԱՆԻ ՖԻԶԻԿԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ)»
ՀԻՄՆԱԴՐԱՄ**

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԵՎ ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ**

2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

Բովանդակություն

- 3 Անկախ աուդիտորական եզրակացություն
- 6 Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
- 8 Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն
- 10 Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն
- 11 Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
- 12 Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ



ԱՆԿԱՆ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է «Ա.Բ.Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին

Վերապահումով կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Ա.Բ.Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» Հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2022թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համար շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին, գուտ ակտիվներում փոփոխությունների մասին, դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփը:

Մեր կարծիքով, բացառությամբ մեր եզրակացության «Վերապահումով կարծիքի հիմքեր» բաժնում նկարագրված հարցերի հնարավոր ազդեցության, կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Հիմնադրամի 2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքի, գուտ ակտիվներում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտի (ՖՀՄՍ):

Վերապահումով կարծիքի հիմքեր

1. Հիմնադրամին վերակազմավորման ընթացքում հանձնվել են հիմնական միջոցներ, որոնք Հիմնադրամի հաշվեկշռում հաշվառվում են պայմանական սկզբնական արժեքներով կամ գրոյական արժեքով, որոնք կարող են եականորեն տարբերվել այդ հիմնական միջոցների իրական արժեքից:

Հիմնադրամը վերակազմավորումից հետո մինչ հաշվետու ժամանակաշրջանի ավարտը չի իրականացրել հիմնական միջոցների առանձին դասերի վերազնահատում, բացառությամբ սեփական շենք, շինություններ դասի, որը վերազնահատվել է 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Հաշվետու ամսաթվի դրությամբ Հիմնադրամն իրականացրել է հիմնական միջոցների ամբողջական գույքագրում, սակայն գույքագրման արդյունքները հնարավոր չի եղել համադրել հաշվապահական տվյալների հետ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մենք նշանակվել ենք Հիմնադրամի աուդիտոր 2022թ. դեկտեմբերի 31-ից հետո, ելնելով Հիմնադրամի հիմնական միջոցների բնույթից և քանակից, ինչպես նաև հաշվի առնելով վերոնշյալ հարցերի հնարավոր ազդեցությունը՝ մենք չկարողացանք որոշել 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքի ճշգրտման հնարավոր ազդեցությունը ֆինանսական հաշվետվությունների վրա:

2. Հաշվետու ամսաթվի դրությամբ Հիմնադրամն իրականացրել է պաշարների ամբողջական գույքագրում, սակայն գույքագրման արդյունքները հնարավոր չի եղել համադրել հաշվապահական հաշվառման տվյալների հետ: Հաշվետու ամսաթվի դրությամբ չի իրականացվել նաև պաշարների հետազգա չափումը՝ իրացման գուտ արժեքից և ինքնարժեքից նվազագույնով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մենք նշանակվել ենք Հիմնադրամի աուդիտոր 2022թ. դեկտեմբերի 31-ից հետո և հնարավորություն չենք ունեցել հետևել գույքագրման գործընթացին, ինչպես նաև ելնելով պաշարների բնույթից և քանակից, մենք չկարողացանք որոշել 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պաշարների հաշվեկշռային արժեքի ճշգրտման հնարավոր ազդեցությունը ֆինանսական հաշվետվությունների վրա:

Աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության *Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար* բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր վերապահումով կարծիքն արտահայտելու համար:

Այլ հանգամանք

Հիմնադրամի 2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները աուդիտի են ենթարկվել այլ աուդիտորի կողմից, ով այդ հաշվետվությունների վերաբերյալ 2022թ. ապրիլի 29-ին արտահայտել է բացասական կարծիք:

Ղեկավարության և կառավարման լիազոր անձանց պատասխանատվությունը

Ղեկավարությունը պատասխանատվություն է կրում ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար, որոնք տալիս են ճշմարիտ և իրական պատկեր, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Հիմնադրամը լուծարելու կամ Հիմնադրամի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման լիազոր անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- բացահայտում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավականաչափ և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար:

խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում:

- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամուտությունը:
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք արդյոք առկա է էական անորոշություն ղեպերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը:
Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա ղեպերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները՝ ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների և ղեպերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման լիազոր անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

«Աուդիտ Արմենիա» ՓԲԸ
24 հուլիսի, 2023թ.
Ք. Երևան

Աննա Ավետիսյան

Տնօրեն-Բաժնետեր
Աուդիտի ղեկավար



«Ա.Բ.ԱՆՌՈՒՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ
 (ԵՐԵՎԱՆԻ ՖԻԶԻԿԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ)» ՀՈՒՆԱՂՐԱՄ
 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱԵՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
 2022թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ

Հազար դրամ	Օանոթ.	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
<i>Ոչ ընթացիկ ակտիվներ</i>			
Հիմնական միջոցներ	4	6,218,714	2,739,821
Ոչ կյութական ակտիվներ		1,087	301
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվներ ձեռքբերելու նպատակով		1,082	22,273
		6,220,883	2,762,395
<i>Ընթացիկ ակտիվներ</i>			
Պաշարներ	5	214,596	142,902
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	6	72,427	53,060
Դեբիտորական պարտքեր շահութահարկի զծով		593	2,948
Դրամական միջոցներ	7	168,527	380,638
		456,143	579,548
Ընդամենը ակտիվներ		6,677,026	3,341,943
<i>Ջուտ ակտիվներ և պարտավորություններ</i>			
<i>Ջուտ ակտիվներ</i>			
Վերագնահատման պահուստ	8	3,782,256	943,637
Կուտակված արդյունք		698,679	707,615
		4,480,935	1,651,252
<i>Ոչ ընթացիկ պարտավորություններ</i>			
Ակտիվների վերաբերող շնորհներ	9	931,727	890,563
Հետաձգված հարկային պարտավորություններ		792,577	166,257
		1,724,304	1,056,820
<i>Ընթացիկ պարտավորություններ</i>			
Եկամուտների վերաբերող շնորհներ	10	325,507	439,920
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	11	146,280	193,951
		471,787	633,871
Ընդամենը պարտավորություններ և զուտ ակտիվներ		6,677,026	3,341,943

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են Հիմնադրամի ղեկավարության կողմից 2023թ. հուլիսի 24-ին՝

Տնօրեն

Գևորգ Քառյան

Ֆինանսական տնօրեն

Վարեն Նիդանյան

«Ա.Ր.Ա.Լ.Ի.Թ.Ա.Ն.Ն.Ի ԱՆՎԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԳՈՏԱԿԱՆ ԼԱՐՈՂԱՏՈՂԻՄ
 (ԵՐԵՎԱՆԻ ՖԻԶԻԿԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ)» ՀՈՒՆԱՂԴԱՄ
 ԸԱՀՈՒԹՅՈՒ ԿԱՄ ԿՆԱՍԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ
 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱԵՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
 2022թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՆՏՎԱԾ ՏԱՐՎԱ

Հազար դրամ	Ծանոթ.	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Լվիրատվությունից եկամուտ	12	1,540,607	1,147,395
Այլ եկամուտ	13	234,503	170,355
Աշխատակիցներին հատուցումներ		(1,188,634)	(938,761)
Մաշվածություն և ամորտիզացիա		(241,647)	(191,898)
Գրասենյակային և կոմունալ ծախսեր		(103,415)	(89,275)
Չփոխհատուցվող հարկերից ծախսեր		(5,095)	(36,467)
Ելութական ծախսեր		(37,784)	(21,468)
Գործուղման և ուսուցման ծախսեր		(19,832)	(23,683)
Այլ ծախսեր		(195,719)	(70,504)
Գործառնական շահույթ		(17,016)	(54,306)
Ֆինանսական եկամուտ		-	2,859
Փոխարժեքային տարբերությունից վնաս		4,998	(10,700)
Գործառնական գործունեությունից արդյունք		(12,018)	(62,147)
Շահութահարկի գծով ծախս	14	16,268	69,691
Տարվա արդյունք		4,250	7,544
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ		3,569,935	-
Հիմնական միջոցների վերագնահատումից արժեքի աճ		(642,588)	-
Շահութահարկի գծով ծախս այլ համապարփակ արդյունքից		2,927,347	-
Ընդամենը այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ		2,931,597	7,544

«Ա.Բ.ԱԼԻՔԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ
 (ԵՐԵՎԱՆԻ ՖԻԶԻԿԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ)» ՀԻՄՆԱԴՐԱՄ
 ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱԵՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
 2022թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ

Հազար դրամ	Վերագնահատման պահուստ	Կուտակված արդյունք	Ընդամենը
2021թ հունվարի 1-ի դրությամբ	1,013,948	629,760	1,643,708
Տարվա արդյունք	-	7,544	7,544
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	7,544	7,544
Վերագնահատման պահուստի իրացում	(70,311)	70,311	-
2021թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	943,637	707,615	1,651,252
Ճշգրտումներ	-	(101,914)	(101,914)
Տարվա շահույթ	-	4,250	4,250
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	4,250	4,250
Վերագնահատման պահուստի իրացում	(88,728)	88,728	-
Վերագնահատումից արժեքի աճ	2,927,347	-	2,927,347
2022թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,782,256	698,679	4,480,935

**«Ա.Ի.ԱԼԻՔԱՆՆԻ ԱՆՎԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԳՆԱԿԱՆ ԼԱՐՈՐԱՏՈՐԻԱ
(ԵՐԵՎԱՆԻ ՖԻՋԻԿԱՅԻ ԻՆՏԵՏՈՒՏ)» ՀԻՄՆԱԴՐԱՄ
ԴՆԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2022թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՆՑՎԱԾ ՏԱՐԿԱ**

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
<i>Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>		
Տարվա արդյունք	4,250	7,544
<i>Ճշգրտումներ</i>		
Մաշվածություն և ամորտիզացիա	241,647	191,898
Հիմնական միջոցների օտարումից եկամուտ	(2,663)	918
Շահութահարկի գծով եկամուտ (ծախս)	(16,268)	(69,691)
Տոկոսային եկամուտ	-	(2,859)
Փոխարժեքային տարբերությունից օգուտ /վնաս	(4,998)	10,700
Գործառնական շահույթ/վնաս նախքան շրջանառու կապիտալի փոփոխություններ	221,968	138,510
Պաշարների փոփոխություն	(71,694)	(1,407)
Դեբիտորական պարտքերի փոփոխություն	(19,002)	16,717
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն	(43,054)	107,905
Շնորհներում փոփոխություն	(73,249)	334,676
Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ	14,969	596,401
Ստացված տոկոսներ	-	2,859
Վճարված շահութահարկ	2,355	(1,197)
<i>Գործառնական գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ</i>	17,324	598,063
<i>Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>		
Հիմնական միջոցների և ոչ կյուրական ակտիվների ձեռքբերում	(241,575)	(421,811)
Ճշգրտումներ	(9,067)	-
Ավանդներ	-	55,278
Տրված կանխավճարներ	21,191	(21,127)
<i>Ներդրումային գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ</i>	(229,451)	(387,660)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/նվազում	(212,127)	210,403
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	16	(6140)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում	380,638	176,375
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա վերջում	168,527	380,638

1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Ա.Ի.Ալիսանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» Հիմնադրամը հիմնադրվել է 1943թ.-ին՝ ողբայրներ Աբրահամ և Արտեմ Ալիսանյանների կողմից, որպես Երևանի պետական համալսարանի մասնաճյուղ:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ. սեպտեմբերի 1-ի թիվ 1301-Ն որոշման համաձայն «Ա.Ի.Ալիսանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերակազմավորվել է որպես «Ա.Ի.Ալիսանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա(Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամ:

2011թ. դեկտեմբերի 6-ին կազմված փոխանցման ակտով Հիմնադրամին որպես իրավահաջորդի, փոխանցվել են ՊՈԱԿ-ի 2011թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ ունեցած ակտիվներն ու պարտավորությունները:

2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամը ֆինանսավորում է ստացել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտական պետական կոմիտեից, ինչպես նաև ֆիզիկայի բնագավառում մասնագիտացած արտասահմանյան մի շարք կազմակերպություններից:

Հիմնադրամի գործունեության հիմնական նպատակներն են՝

- Գիտական և գիտատեխնիկական գործունեության իրականացումը,
- Գիտատեխնոլոգիական և ինովացիոն գործունեության իրականացումը,
- Բարձր որակի գիտական և գիտամանկավարժական (ներառյալ մագիստրական և ասպիրանտական) կադրերի պատրաստման գործունեության իրականացումը:

Հիմնադրամի կառավարման մարմիններն են՝

1. Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը
2. Հիմնադրամի տնօրենը

Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամներն են.

Խորհրդի նախագահ՝	Սարգիս Հայոցյան,
Խորհրդի անդամներ՝	Ռաֆայել Բարխուդարյան, Խաչատուր Ներկարարյան, Արամ Պապոյան, Սամվել Կարաբեկյան, Հրաչյա Մարության, Ռուբեն Մկրտչյան:

Հիմնադրամի կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմինը հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդն է: Հոգաբարձուների խորհուրդը բաղկացած է 7 անդամներից: Հոգաբարձուների խորհրդի նախագահը և անդամները նշանակվում են ՀՀ վարչապետի որոշմամբ: Հիմնադրամի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Հիմնադրամի տնօրենը: Տնօրենը կազմակերպում է հոգաբարձուների խորհրդի որոշումների կատարումը:

2022թ. Հիմնադրամի աշխատակիցների միջին թվաքանակը կազմել է 363 մարդ (2021թ.՝ 351 մարդ):

Հիմնադրամի իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Ալիսանյան եղբայրների փող.2:

2 Պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական Հաշվառման

ՖՀՄՍ-ները ներկայումս չեն պարունակում ոչ առևտրային կազմակերպությունների հաշվապահական հաշվառման և ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ հատուկ ուղեցույցներ: Եթե ՖՀՄՍ-ն ուղղորդում չի տրամադրում շահույթ չհետապնդող կազմակերպություններին կոնկրետ գործարքների հաշվառման վերաբերյալ, հաշվապահական հաշվառման քաղաքականությունը պետք է հիմնված լինի ՖՀՄՍ-ի ընդհանուր սկզբունքների վրա՝ համաձայն Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՄՍԽ) հրապարակած «Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքների»:

2.2 Ճանաչման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով, բացառությամբ շենքերի, որոնք չափվում են իրական արժեքով՝ հանած վերագնահատման ամսաթվից հետո կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Հիմնադրամի գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Հիմնադրամի գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ ղեկավարության համոզմամբ այս արժույթն առավել օգտակար է Հիմնադրամի ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.4 Անընդհատություն

Ֆինանսական հաշվետվությունները կազմվել են, ելնելով անընդհատության հիմունքից, որը ենթադրում է ակտիվների իրացում և պարտավորությունների մարում բնականոն գործունեության ընթացքում և որ հաշվետու ամսաթվից հետո 12 ամսում գործունեությունը դադարեցնելու կամ էական կրճատելու մտադրություն կամ անհրաժեշտություն չկա:

2.5 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Հիմնադրամի ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա:

Նշանակալի ոլորտները, որոնք ներառում են ավելի բարձր աստիճանի դատողություն, որտեղ ենթադրություններն ու գնահատումները կարևոր են ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտվում են ֆինանսական հաշվետվությունների կից ծանոթագրություններում:

2.6 Նոր և վերանայված ստանդարտներ

Նոր և վերանայված ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնք կիրառելի են 2022թ. հունվարի 1-ից դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար

Մտորև ներկայացված են նոր կամ փոփոխված ստանդարտների այն ցանկը, որոնք Հիմնադրամի ղեկավարության գնահատմամբ նշանակալի ազդեցություն չեն ունենա Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա.

- «COVID-19» համավարակի հետ կապված զիջումներ վարձակալության գծով 2021 թվականի հունիսի 30-ից հետո ունեցած ժամանակաշրջանների համար (փոփոխություններ ՖՀՄՍ 16-ում)

- Անբարենպաստ պայմանագրեր, Պայմանագրի կատարման ծախսումներ (փոփոխություններ ՀՀՄՍ 37-ում),
- Հիմնական միջոցներ, Մուտքեր նախքան նպատակային օգտագործումը (փոփոխություններ ՀՀՄՍ 16-ում),
- Ապահովագրության պայմանագրեր (փոփոխություններ ՖՀՄՍ 17-ում),
- Հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտումներ (փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում),
- Հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանում (փոփոխություններ ՀՀՄՍ 8-ում) :

Դեռևս չկիրառվող նոր ստանդարտներ

Հրապարակված, սակայն ֆինանսական հաշվետվություններին վերաբերող հաշվետու ժամանակաշրջանի համար դեռևս չկիրառվող նոր ստանդարտները բերված են ստորև.

- Մեկ գործարքից առաջացած ակտիվներին և պարտավորություններին վերաբերող հետաձգված հարկ, փոփոխություններ «Շահութահարկեր» ՀՀՄՍ 12-ում.

Փոփոխությունները սահմանափակում են սկզբնական ճանաչման ժամանակ կիրառվող բացառության շրջանակը՝ բացառելու համար այն գործարքները, որոնք առաջանում են հավասար և հաշվանցվող ժամանակավոր տարբերություններ, օրինակ՝ վարձակալության և շահագործումից հանելու պարտավորությունների դեպքում: Փոփոխությունները գործում են 2023 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանի համար: Վարձակալությանը և շահագործումից հանելու պարտավորություններին վերաբերող հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները պետք է ճանաչվեն ներկայացված ամենավաղ համադրելի ժամանակաշրջանի սկզբից՝ ցանկացած կուտակային հետևանքը ճանաչելով որպես չբաշխված շահույթի կամ սեփական կապիտալի այլ բաղադրիչների ճշգրտում այդ ամսաթվի դրությամբ: Բոլոր մյուս գործարքների համար փոփոխությունները կիրառվում են այն գործարքների նկատմամբ, որոնք տեղի են ունենում ներկայացած ամենավաղ ժամանակաշրջանի սկզբից հետո:

- Պարտավորությունների դասակարգում ընթացիկ և ոչ ընթացիկ, փոփոխություններ «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը» ՀՀՄՍ 1-ում.

Փոփոխությունների համաձայն, եթե Հիմնադրամն իրավունք ունի երակարած գել պարտավորության մարումը հաշվետու ամսաթվից հետո նվազագույնը 12 ամիս, ապա այն դասակարգվում է ոտրպես ոչ ընթացիկ՝ անկախ այդ իրավունքն օգտագործելու մտադրությունից:

Կատարվել է նաև հետազոտ պարզաբանում այն մասին, որ եթե պարտավորության մարման ժամկետը կախված է Հիմնադրամի կողմից որևէ կովենանտի բավարարման փաստից, ապա պարտավորության դասակարգման նպատակով հաշվի են առնվում միայն այն կովենանտները, որոնց Հիմնադրամը պետք է բավարարեր հաշվետու ամսաթվի դրությամբ: Անհրաժեշտ է կատարել նաև կովենանտների վերաբերյալ ռիսկերի գծով բացահայտումներ: Փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2024 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

Հիմնադրամը չի ակնկալում, որ վերը նշված փոփոխությունները նշանակալի ազդեցություն կունենան իր ֆինանսական հաշվետվությունների վրա:

2.7 Ֆինանսական հաշվետվությունների կազմը

Ֆինանսական հաշվետվություններում ներառված են՝

ա) ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն՝ ժամանակաշրջանի վերջի դրությամբ: Ընթացիկ և ոչ ընթացիկ ակտիվներն ու պարտավորությունները ներկայացվում են առանձին դասակարգմամբ.

բ) ֆինանսական արդյունքի մասին մեկ հաշվետվություն՝ տվյալ ժամանակաշրջանի համար: Հիմնադրամը ներկայացնում է շահույթում կամ վնասում ճանաչված ծախսերի բաժանումը (վերլուծումը)՝ օգտագործելով դրանց բնույթի վրա հիմնված դասակարգումը.

զ) գուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն՝ տվյալ ժամանակաշրջանի համար.

դ) դրամական հոսքերի մասին հաշվետվություն՝ տվյալ ժամանակաշրջանի համար: Գործառնական գործունեությունից առաջացող դրամական հոսքերի մասին տեղեկատվությունը ներկայացվում է՝ օգտագործելով անուղղակի մեթոդը: Վճարված հարկերը դասակարգվում են որպես գործառնական գործունեությունից առաջացող դրամական հոսքեր:

ե) ծանոթագրություններ, որոնք բաղկացած են հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի համառոտ նկարագրից և այլ բացատրական տեղեկատվությունից.

Ֆինանսական հաշվետվություններում բացահայտվում է ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր գումարների՝ նախորդ ժամանակաշրջանի (նախորդ տարի) համադրելի տեղեկատվությունը: Երբ Հիմնադրամը իր ֆինանսական հաշվետվություններում փոփոխում է հողվածների ներկայացումը կամ դասակարգումը, ապա վերադասակարգում է համադրելի գումարները, բացի այն դեպքերից, երբ վերադասակարգումն անիրագործելի է:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1 Արտարժույթ

Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Հիմնադրամի համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված միջին փոխարժեքով: Ցուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հողվածները պետք է վերահաշվարկվեն՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված միջին փոխարժեքը: Իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով սահմանված ոչ դրամային հողվածները վերահաշվարկվում են գործարքի օրվա դրությամբ գործող միջին փոխարժեքով: Ոչ դրամային հողվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում: Ստորև ներկայացված են ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված միջին փոխարժեքները.

	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ռուբլի	5,59	6.42
ԱՄՆ դոլար	393,57	480.14
Եվրո	420.06	542.61

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հողվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում:

3.2 Հիմնական միջոցներ

Հիմնադրամի շենքերը և շինությունները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված են վերագնահատված արժեքով, որն իրենից ներկայացնում է վերագնահատման օրվա դրությամբ հիմնական միջոցի իրական արժեքը հանած հետագա կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները:

Ցանկացած կուտակված մաշվածություն վերագնահատման օրը բացառվում է ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքից և ակտիվի վերագնահատված արժեքում ներկայացվում է գուտ արժեքը: Վերագնահատումներն իրականացվում են բավարար պարբերականությամբ անկախ գնահատողների կողմից այնպես, որ հաշվեկշռային արժեքն էականորեն չտարբերվի հաշվետու ամսաթվի դրությամբ իրական արժեքից:

Հիմնական միջոցների վերագնահատումից արժեքի աճը վերագրվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքին և արտացոլվում է պահուստներում՝ որպես վերագնահատման պահուստ: Մակայն, եթե այդ աճը վերականգնում է նույն ակտիվի նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած նվազումը, այն ճանաչվում է եկամուտների և ծախսերի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում՝ որպես եկամուտ այն չափով, որով նախկինում նվազումը ճանաչվել էր որպես ծախս: Երբ հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով նվազում է, նվազումը ճանաչվում է շահույթում կամ վնասում այն չափով, որը գերազանցում է նույն ակտիվի գծով նախորդ վերագնահատումից առաջացած վերագնահատման աճը:

Կուտակված շահույթում ճանաչված վերագնահատումից աճն իրենից ներկայացնում է ակտիվի վերագնահատված հաշվեկշռային արժեքի հիման վրա հաշվարկված մաշվածության և ակտիվի սկզբնական արժեքի հիման վրա հաշվարկված մաշվածության տարբերությունը: Վերագնահատված հիմնական միջոցի միավորի իրացման կամ դուրսգրման դեպքում վերագնահատման պահուստում դրա գծով առկա վերագնահատումից աճն ուղղակիորեն վերագրվում է կուտակված շահույթին:

Հիմնական միջոցների այլ դասերը հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

ՀՀ հողային օրենսգրքի փոփոխության արդյունքում Հիմնադրամին փոխանված հողը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված է իրական արժեքի և կադաստրային արժեքի տարբերությամբ: Հողի հաշվեկշռային արժեքի նկատմամբ մաշվածություն չի հաշվարկվում:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է ժամանակաշրջանի արդյունքում:

Հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այն ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են եկամուտներում և ծախսերում կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Շենքեր, շինություններ	20 տարի,
Մեքենաներ և սարքավորումներ	1-8 տարի,
Տրանսպորտային միջոցներ	1-8 տարի,
Արտադրական գույք, տնտեսական գույք, գործիքներ	1-8 տարի,
Հաշվողական և համակարգչային տեխնիկա	1 տարի,
Այլ հիմնական միջոցներ	1-8 տարի:

3.3 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվներ են համակարգչային ծրագրերը, արտոնագրերը, որոնք ներկայացվում են սկզբնական

արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և կուտակված արժեզրկումից կորուստները: Ամորտիզացիան ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում:

Եթե առկա է որևէ հայտանիշ, որ տեղի են ունեցել ամորտիզացիայի հաշվարկման դրույթաչափերի, ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության կամ մնացորդային արժեքի նշանակալի փոփոխություններ, ապա ամորտիզացիան վերանայվում է առաջընթաց կերպով՝ նոր ակնկալիքներն արտացոլելու նպատակով:

Ոչ նյութական ակտիվների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Համակարգչային ծրագրեր - 8 տարի

3.4 Ակտիվների արժեզրկում

Հ/Մ-ների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում

Մաշվող ակտիվները արժեզրկման համար վերանայվում են, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը վաճառքի գուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլինի, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեն: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

3.5 Վարձակալություն

Կարճաժամկետ և ցածրարժեք վարձակալություններ

Հիմնադրամը կիրառում է ՖՀՄՍ 16 ստանդարտով նախատեսված կարճաժամկետ վարձակալության ճանաչման ազատումը մեքենաների և սարքավորումների և գրասենյակային գույքի կարճաժամկետ վարձակալության դեպքում: Սրանք այն վարձակալություններն են, որոնց ժամկետը մինչև 12 ամիս է և չեն պարունակում գնման տարբերակ:

Կարճաժամկետ վարձակալության վարձավճարները ճանաչվում են որպես ծախս գծային հիմունքով՝ վարձակալության ժամկետի ընթացքում:

3.6 Պաշարներ

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման գուտ արժեքից նվազագույնով: Իրացման գուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը ներառում է պաշարների ձեռքբերման, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսերը:

Իրացման գուտ արժեքը վաճառքի ենթադրվող գինն է՝ հանած համալրման (վերանորոգման) ենթադրվող ծախսումները, ինչպես նաև վաճառքի կազմակերպման համար անհրաժեշտ ենթադրվող ծախսումները: Իրացման գուտ արժեքի գնահատումները հիմնվում են պաշարների իրացումից սպասվելիք գումարի գնահատման պահին հասանելի առավել արժանահավատ վկայության վրա: Այդ գնահատումները կատարելիս հաշվի են առնվում հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տեղի ունեցած դեպքերի հետ ուղղակիորեն կապված գների կամ ծախսումների տատանումներն այնքանով, որքանով նման դեպքերը հաստատում են ժամանակաշրջանի վերջի դրությամբ առկա պայմանները:

3.7 Ընորհներ

Ընորհը չի ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավոր հավաստիացում, որ Հիմնադրամը կատարելու է դրան կից բոլոր պայմանները, և որ շնորհը ստացվելու է:

Ընորհները, որոնց հիմնական պայմանը Հիմնադրամի կողմից ոչ ընթացիկ ակտիվներ գնելը, կառուցելը կամ այլ կերպ ձեռք բերելն է, գրանցվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես ակտիվներին վերաբերող շնորհներ և սխտեմատիկորեն փոխանցվում են տարվա արդյունք՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Ընորհները, որոնք ստացվել են դոնորների կողմից որպես առանց նախապայմանների ֆինանսական օգնություն կամ որպես կրած ծախսերի կամ վնասների փոխհատուցում, ճանաչվում են տարվա արդյունքում, երբ դրանք դառնում են ստացման ենթակա:

Ընորհները, որոնք ստացվել են դոնորների կողմից, սակայն հաշվետու ամսաթվի դրությամբ չեն օգտագործվել ըստ նպատակայնության, ճանաչվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես հետաձգված եկամուտ (ընթացիկ պարտավորություն) և սխտեմատիկորեն փոխանցվում են տարվա արդյունք՝ այդ շնորհների օգտագործմանը զուգընթաց:

Այլ շնորհները ճանաչվում են սխտեմատիկ հիմունքով եկամուտ այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք փոխհատուցում են համապատասխան ծախսումները, որոնց համար դրանք ստացվել են:

3.8 Պահուստ

Հիմնադրամը պահուստը պետք է ճանաչի միայն այն դեպքում, երբ

- ա) Հիմնադրամը հաշվետու ամսաթվի դրությամբ ունի պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք.
 - բ) հավանական է (այսինքն՝ ավելի շատ հավանական է, քան՝ ոչ), որ մարելու համար Հիմնադրամից կպահանջվի փոխանցել տնտեսական օգուտներ.
 - գ) պարտականության գումարը կարող է արժանահավատորեն գնահատվել:
- Հիմնադրամը պահուստը պետք է ճանաչի ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես պարտավորություն, և պետք է ճանաչի պահուստի գումարը որպես ծախս:

Հիմնադրամը պահուստը պետք է չափի հաշվետու ամսաթվի դրությամբ պարտականությունը մարելու համար պահանջվող գումարի լավագույն գնահատականով: Լավագույն գնահատականն այն գումարն է, որը Հիմնադրամը խելամտորեն կվճարեր՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ այդ պարտականությունը մարելու կամ այդ պահին երրորդ կողմին փոխանցելու համար:

Հիմնադրամը պահուստի հաշվին պետք է մարի միայն այն ծախսերը, որոնց գծով պահուստը սկզբնապես ճանաչվել էր:

3.9 Ծախսահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ, ըստ էության գործող հարկային դրույթաչափերով:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնք ակնկալվում է, որ կիրառման մեջ կլինեն ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Այլ տեղեկատվության բացակայության դեպքում Հիմնադրամը կիրառում է 18% դրույք՝ հարկվող ժամանակավոր տարբերությունների և օգտագործվող նվազեցվող (հանվող) ժամանակավոր տարբերությունների նկատմամբ:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չեն զեղչվում (դիսկոնտավորվում):
Հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ստուգվում (վերանայվում) է: Հիմնադրամը նվազեցնում է հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքն այն չափով, որքանով որ այլևս հավանական չէ, որ կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել: Ցանկացած այդպիսի նվազեցում վերականգնվում է այն չափով, որքանով որ հավանական է դառնում բավարար հարկվող շահույթի ստացումը:

Ընթացիկ և հետաձգված հարկերը պետք է ճանաչվեն որպես եկամուտ կամ ծախս և ներառվեն տվյալ ժամանակաշրջանի շահույթի կամ վնասի մեջ, բացառությամբ հարկի այն մասի, որոնք վերաբերում են այն հոդվածներին, որոնք, նույն կամ տարբեր ժամանակաշրջանում, ճանաչված են՝

ա) այլ համապարփակ ֆինանսական արդյունքում՝ պետք է ճանաչվեն այլ համապարփակ ֆինանսական արդյունքում.

բ) ուղղակիորեն սեփական կապիտալում՝ պետք է ճանաչվեն ուղղակիորեն սեփական կապիտալում:
Հիմնադրամը շահույթ կամ վնասի, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի և սեփական կապիտալի հոդվածները ներկայացնում է՝ հանելով համապատասխան հարկային հետևանքները:

Հիմնադրամը ընթացիկ հարկային ակտիվները և ընթացիկ հարկային պարտավորությունները հաշվանցում է այն և միայն այն դեպքում, եթե՝

ա) ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, և՛
բ) մտադիր է՝ կամ հաշվարկն իրականացնել (ակտիվը կամ պարտավորությունը մարել) գուտ հիմունքով, կամ իրացնել ակտիվը և մարել պարտավորությունը միաժամանակ:

Հիմնադրամի հետաձգված հարկային ակտիվը և հետաձգված հարկային պարտավորությունը հաշվանցում է այն և միայն այն դեպքում, եթե՝

ա) ունի իրավաբանորեն ամրագրված իրավունք հաշվանցելու հետաձգված հարկային ակտիվները հարկային պարտավորությունների դիմաց, և՛

բ) հետաձգված հարկային ակտիվը և հետաձգված հարկային պարտավորությունը վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից

-նույն հարկատուից (հարկվող միավորից), կամ

-տարբեր հարկատուներից, որոնք մտադիր են կամ մարել ընթացիկ հարկային պարտավորությունները և ակտիվները գուտ հիմունքով, կամ իրացնել ակտիվները և մարել պարտավորությունները միաժամանակ՝ յուրաքանչյուր ապագա ժամանակաշրջանում, որի ընթացքում ակնկալվում է հետաձգված հարկային պարտավորությունների և ակտիվների զգալի գումարների մարում կամ փոխհատուցում:

3.10 Հասույթ

Այս ստանդարտը առաջին անգամ քննարկման է դրվել 2008թ.-ին: Վերջնական տարբերակը թողարկվել է 2014թ. մայիսին:

ՖՀՄՍ 15. «Հասույթ գնորդների հետ կնքված պայմանագրերից» ստանդարտի էական սկզբունքն այն է, որ Հիմնադրամը պետք է հասույթը ճանաչի այն գումարով, որով որ Հիմնադրամը պատկերացնում կամ ակնկալում է, որ հաճախորդներին, ըստ պայամանագրի, տրված ապրանքների կամ մատուցված ծառայությունների գումարները կստացվեն կամ կհավաքվեն Հիմնադրամի կողմից: Ստանդարտը տալիս է պարզ, սկզբունքների վրա հիմնված հինգ քայլ պարունակող մոդել, որը կիրառվելու է հաճախորդների հետ բոլոր պայմանագրերի հաշվառման նպատակով:

Ստանդարտի հիմնական սկզբունքը ներկայացված է հինգ քայլ ներառող մոդելում՝

Քայլ 1. նույնացնել գնորդի հետ պայմանագիրը,

Քայլ 2. որոշել գնորդի հետ պայմանագիրը,

Քայլ 3. նույնացնել գործարքի գինը.

Քայլ 4. քաշխել գործարքի գինը կատարման ենթակա պարտավորություններին,

Քայլ 5. ճանաչել հատույթը, երբ Հիմնադրամը կատարում է կատարողական պարտավորությունները:

3.11 Աշխատակիցներին հատուցումներ

Կարճաժամկետ հատուցումներն աշխատակիցներին այն հատուցումներն են, որոնք ենթակա են մարման ամբողջությամբ տարեկան այն հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայությունները: Դրանք ներառում են՝

(ա) աշխատավարձերը և պարգևավճարները,

(բ) վճարովի տարեկան արձակուրդները և անաշխատունակության հետ կապված վճարովի արձակուրդները,

Երբ աշխատակիցները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Հիմնադրամին մատուցում են ծառայություններ, Հիմնադրամն աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չգեղչված գումարը, որն ակնկալում է վճարել այդ ծառայությունների դիմաց, ճանաչում է՝

(ա) որպես պարտավորություն (հաշվեգրված ծախս)՝ արդեն վճարված ցանկացած գումար հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չգեղչված գումարը, Հիմնադրամը պետք է ճանաչի այդ տարբերությունը որպես ակտիվ (կանխավճարված ծախս)՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի,

(բ) որպես ծախս, եթե գումարը չի ներառվել այլ ակտիվի արժեքի մեջ:

Վճարովի բացակայություններ

Վճարովի բացակայությունների ձևով աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են հետևյալ կերպ.(ա) կուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքներն ապագա վճարովի բացակայությունների նկատմամբ,

(բ) չկուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

Պարգևավճարներ

Պարգևավճարների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են միայն այն ժամանակ, երբ Հիմնադրամն ունի այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և պարտականությունը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ներկա պարտականություն գոյություն ունի այն և միայն այն դեպքում, երբ Հիմնադրամը վճարում չկատարելու ոչ մի իրատեսական այլընտրանք չունի:

3.12 Ֆինանսական գործիքներ

Ճանաչում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները կամ ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Հիմնադրամը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվները ապաճանաչվում են, երբ ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները լրանում են, կամ երբ ֆինանսական ակտիվները և բոլոր նշանակալի ռիսկերը և հատուցումները փոխանցվում են:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, ենթակա չեն վճարման, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվների դասակարգում և սկզբնական չափում

Ֆինանսական ակտիվները բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով,

- փոխառություններ և դեբիտորական պարտքեր:

Ֆինանսական ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ վերագրվում են տարբեր կատեգորիաների՝ կախված գործիքի բնույթից և նպատակից: Ֆինանսական գործիքի կատեգորիան համապատասխանեցվում է այն սկզբունքին, որով չափվում է տվյալ գործիքը և այն հանգամանքին, թե արդյոք առաջացող եկամուտը և ծախսերը ճանաչվում են շահույթում կամ վնասում, թե ուղղակիորեն այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում:

Ֆինանսական ակտիվների հետ կապված բոլոր ծախսերը և եկամուտները որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում, ներկայացվում են "Ֆինանսական ծախս", "Ֆինանսական եկամուտ" կամ "Այլ ֆինանսական արդյունքներ" հոդվածներում, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման, որը ներկայացվում է "Այլ ծախսեր" հոդվածում:

I. Ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով

Ֆինանսական ակտիվները՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, ներառում են առևտրային նպատակով պահվող ֆինանսական ակտիվները կամ այն ֆինանսական ակտիվները, որոնք որպես չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով դասակարգվել Հիմնադրամի կողմից սկզբնական ճանաչման ժամանակ: Բոլոր ածանցյալ ֆինանսական գործիքները, որոնք ենթակա չեն հեջավորման, դասակարգվում են այս կատեգորիայում:

Ածանցյալ ֆինանսական գործիքների գծով առաջացած ցանկացած օգուտ կամ վնաս հիմնված է իրական արժեքի փոփոխության վրա, որը որոշվում է՝ ուղղակիորեն վկայակոչելով գործող շուկայում գործարքները կամ գործող շուկայի բացակայության դեպքում՝ գնահատման մեթոդի միջոցով:

II. Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները չափվում են իրական արժեքով՝ իրական արժեքի փոփոխությունները ուղղակիորեն ճանաչելով այլ համապարփակ արդյունքներում: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների կատեգորիայում դասակարգված ֆինանսական գործիքներից առաջացած օգուտը կամ վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում այն դեպքում, երբ նշված ակտիվները վաճառվում են կամ երբ ներդրումն արժեզրկվում է: Արժեզրկման դեպքում ցանկացած վնաս, որը նախկինում ճանաչվել էր այլ համապարփակ արդյունքներում, փոխանցվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն: Սեփական կապիտալի գործիքներից առաջացած և համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված վնասները չեն հակադարձվում համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, այլ ճանաչվում են սեփական կապիտալում: Նախորդ ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված պարտքային արժեթղթերի արժեզրկումից առաջացած վնասները հակադարձվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, եթե հետագա աճը հիմնվում է այն դեպքի վրա, որը տեղի է ունեցել համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ արժեզրկումից վնասի ճանաչումից հետո:

III. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Ընթացիկ դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով: Հետագայում դրանք հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ հանած արժեզրկման պահուստը: Առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման պահուստը ստեղծվում է այն ժամանակ, երբ առկա է օբյեկտիվ ապացույց, որ Հիմնադրամը սկզբնապես սահմանված ժամկետներում չի կարող հավաքագրել վերադարձման ենթակա բոլոր գումարները: Դեբիտորի զգալի ֆինանսական դժվարությունները, վճարման հետաձգումը և վճարումների ուշացումները ցուցանիչ են այն բանի, որ առևտրային դեբիտորական պարտքն արժեզրկված է: Պահուստի գումարը ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով գեղչված ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի տարբերությունն է:

Պահուստի մնացորդը ճշգրտվում է հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ ծախսի կամ եկամտի ճանաչման միջոցով: Հաճախորդի հաշվի մնացորդից դուրս գրվող ցանկացած գումար նվազեցվում է առկա կասկածելի դեբիտորական պարտքի պահուստից: Բոլոր դեբիտորական պարտքերը, որոնց հավաքագրումը գնահատվում է անհավանական, դուրս են գրվում:

IV. Մնացորդներ դրամարկղում և բանկերում

Մնացորդները բանկերում ներառում են բանկային հաշիվների մնացորդները:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական ակտիվները, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, գնահատվում են արժեզրկման հայտանիշի առկայության համար: Ֆինանսական ակտիվներն արժեզրկված են, եթե առկա է անկողմնակալ վկայություն, որ ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի իրադարձություններ ազդել են ակնկալվող դրամական միջոցների հոսքերի վրա:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման կորուստը հաշվառվում է ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով գեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերությամբ: Բոլոր ֆինանսական ակտիվների համար արժեզրկումից կորուստն ուղղակիորեն նվազեցվում է ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքից, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի, որոնց հաշվեկշռային արժեքը նվազեցվում է կասկածելի պարտքի պահուստի միջոցով:

Բացառությամբ վաճառքի համար մատչելի սեփական կապիտալի գործիքների, եթե հետագա ժամանակաշրջանում արժեզրկման կորուստը նվազում է և նվազումը օբյեկտիվորեն կարելի է վերագրել արժեքի իջեցումից հետո տեղի ունեցած դեպքերին, ապա նախկինում ճանաչված արժեզրկման կորուստը հակադարձվում է՝ ճանաչվելով համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն չափով, որ հակադարձումը չհանգեցնի ֆինանսական ակտիվի այնպիսի հաշվեկշռային արժեքի, որը գերազանցի այն ամորտիզացված արժեքը, որը կլինի, եթե այդ ֆինանսական ակտիվի արժեքի իջեցման հակադարձման ամսաթվի դրությամբ արժեզրկում ճանաչված չլիներ:

Ֆինանսական պարտավորությունների դասակարգում և սկզբնական չափում

Հիմնադրամի ֆինանսական պարտավորությունները ներառում են առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը:

I. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

Հիմնական միջոցներ

զար դրամ	Հոդա- մասեր	Ըներ, շինություն ներ	Մերձակեր, սարքավոր- ումներ	Տրանսպոր- տային միջոցներ	Արտադրա- կան, տնտեսական և այլ գույք	Շահագործման մեջ չգտնվող ՀՄ-ներ	Այլ հիմնական միջոցներ	Ճշգրտում ներ	Ընդամենը
<i>զբնական արժեք</i>									
1թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ	496,069	2,046,059	1,017,499	63,522	20,575	1,566	52,687	926,696	4,624,673
վաճում	-	-	358,733	-	1,789	2,204	52,210	-	414,936
զիջում	-	634	1,853	-	8	-	4,048	-	6,543
արում, դուրսգրում	-	-	(2,871)	-	-	-	-	-	(2,871)
1թ. դեկտեմբերի 31-ի վրայում	496,069	2,046,693	1,375,214	63,522	22,372	3,770	108,945	926,696	5,043,281
վաճում	-	-	53,792	-	4,264	13,225	172,056	-	243,337
ազնահատումից աճ ընդուններ	-	4,042,947	-	-	-	-	-	-	4,042,947
արում, դուրսգրում	-	(651)	(8)	(11)	-	-	-	(926,696)	(926,696)
2թ. դեկտեմբերի 31-ի վրայում	496,069	6,088,989	1,428,998	63,511	26,636	16,995	281,001	-	8,402,199
<i>տակված մաշվածություն</i>									
1թ. հունվարի 1-ի դրությամբ	-	565,382	618,852	56,510	16,439	-	22,512	833,849	2,113,544
վաճում	-	114,840	63,971	4,707	1,575	-	6,775	-	191,868
արում, դուրսգրում	-	-	(1,952)	-	-	-	-	-	(1,952)
1թ. դեկտեմբերի 31-ի վրայում	-	680,222	680,871	61,217	18,014	-	29,287	833,849	2,303,460
վաճում	-	165,043	53,247	2,075	1,499	-	19,668	-	241,532
ազնահատումից աճ ընդուններ	-	472,413	-	-	-	-	-	-	472,413
արում, դուրսգրում	-	-	(60)	(11)	-	-	-	(833,849)	(833,849)
2թ. դեկտեմբերի 31-ի վրայում	-	1,317,678	734,058	63,281	19,513	-	48,955	-	2,183,485
<i>զվեցումից արժեք</i>									
1թ. դեկտեմբերի 31-ի վրայում	496,069	1,366,471	694,343	2,305	4,358	3,770	79,658	92,847	2,739,821
2թ. դեկտեմբերի 31-ի վրայում	496,069	4,771,311	694,940	230	7,123	16,995	232,046	-	6,218,714

2թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 813,088 հազ. դրամ (2021թ. 699,104 հազ. դրամ) սկզբնական արժեքով հիմնական միջոցներ հաշվառվում են յական հաշվեկշռային արժեքով:
նադրամի շենքերը վերագահատվել են 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ անկախ գնահատողների կողմից: Վերագահատման աճը վերագրվել է ազնահատման պահուստին:

2թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների նկատմամբ սահմանափակումներ չկան:
նադրամի «Շենքեր և շինություններ» դասում հաշվառվող հիմնական միջոցների մի մասը տրված է գործարանական վարձակալության: Վարձակալական սնույթը 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում կազմել է 44,618 հազ.դրամ, (2021թ.՝ 31,929 հազ.դրամ), որը ներառված է այլ եկամուտ ձևակալությունից եկամուտ հողվածում (տես ծանոթագրություն 6):

5 Պաշարներ

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Լյուքեր	181,299	112,021
Թանկարժեք մետաղներ և քարեր	5,992	5,992
Այլ	27,305	24,889
	214,596	142,902

6 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դեբիտորական պարտքեր վաճառքի գծով	68,940	49,760
Դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստ	(3,875)	(1,063)
	65,065	48,697
Տրված կանխավճարներ	2,070	285
Դեբիտորական պարտքեր բյուջեի գծով	835	80
Այլ դեբիտորական պարտքեր	4,457	3,998
	72,427	53,060

Դեբիտորական պարտքերի գուտ հաշվեկշռային արժեքը համարվում է իրական արժեքի խելամիտ գնահատում:

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ դեբիտորական պարտքի մնացորդը ներառում է գործառնական վարձակալության գծով հիմնադրամի վարձակալների պարտքը 19,606 հազ. դրամ (2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 18,634 հազ. դրամ):

7 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դրամարկդ	-	370
Բանկային հաշիվներ (դրամային)	84,609	284,619
Բանկային հաշիվներ (արտարժույթային)	83,918	95,649
	168,527	380,638

8 Վերագնահատման պահուստ

Վերագնահատման պահուստն առաջացել է շենքերի վերագնահատման արդյունքում: Վերագնահատված շենքերի շահագործմանը զուգընթաց և դրանց օտարման ժամանակ վերագնահատման պահուստը հաշվեկրվում է ուղղակիորեն կուտակված արդյունքին:

Հիմնադրամի շենքերը վերագնահատվել են 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ անկախ գնահատողների կողմից: Վերագնահատման աճը վերագրվել է վերագնահատման պահուստին:

9 Ակտիվներին վերաբերող շնորհ

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Տարեսկզբի մնացորդ	890,563	802,673
Ստացված շնորհներ	65,630	371,853
Տեղափոխում եկամուտին վերաբերող շնորհներից	218,295	41,720
Տեղափոխում եկամուտին վերաբերող շնորհներին	(17,531)	(2,801)
Շնորհի վերադարձ	-	(163,589)
Շնորհից եկամուտ	(225,230)	(159,293)
Տարեվերջի մնացորդ	931,727	890,563

10 Եկամուտներին վերաբերող շնորհ

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Տարեսկզբի մնացորդ	439,920	193,134
Ստացված շնորհներ	1,394,461	1,262,656
Շնորհի ճշգրտում	7,282	-
Տեղափոխում ակտիվներին վերաբերող շնորհներին	17,531	-
Տեղափոխում ակտիվներին վերաբերող շնորհներից	(218,295)	(41,720)
Շնորհի վերադարձ	(15)	(2,186)
Շնորհից եկամուտ	(1,315,377)	(971,964)
Տարեվերջի մնացորդ	325,507	439,920

11 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	72,545	107,265
Ստացված կանխավճարներ	3,193	13,999
Կրեդիտորական պարտքեր բյուջեի գծով	27,895	28,438
Աշխատավարձի գծով պարտք	-	440
Արձակուրդի պահուստ	42,647	43,809
Այլ կրեդիտորական պարտքեր	-	-
	146,280	193,951

12 Նվիրատվություններից եկամուտ

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ակտիվներին վերաբերող շնորհից	225,230	175,432
Եկամուտներին վերաբերող շնորհից	1,315,377	971,964
	1,540,607	1,147,396

Հիմնադրամը ֆինանսավորում է ստացել ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեից՝ հետևյալ ծրագրերի իրականացման նպատակով՝

- Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանում և զարգացում,
- Ֆիզիկայի բնագավառում արդիական գիտական ներուժի ապահովում,
- Գիտության ոլորտում ենթակառուցվածքի, կյոթատեխնիկական բազայի արդիականացում,
- Հայ-Ֆրանսիական գիտական համագործակցության շրջանակներում երկկողմ փոխգործակցություն,
- Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային, նպատակային-ծրագրային և պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերում և թեմաներում ներգրավված գիտական աստիճան ունեցող աշխատակիցներին վճարվող հավելավճարներ,
- Ասպիրանտական և դոկտորական կրթաթոշակներ,
- Գիտական և գիտատեխնիկական գործունեության հիմնարար և կարևորագույն կիրառական նշանակություն ունեցող հետազոտություններ:

Հիմնադրամը ֆինանսավորում է ստացել նաև Deutches Elektronen-Synchrotron DESY գերմանական արագացուցչային կենտրոնից՝ ֆիզիկայի բնագավառում փոխհամագործակցության նպատակով, ինչպես նաև Ատոմային էներգիայի միջազգային գործակալությունից (IAEA)՝ գիտական հետազոտությունների իրականացման համար:

13 Այլ եկամուտ

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ապրանքների վաճառքից հասույթ	70,468	72,206
Գիտական տնտեսական պայմանագրերից եկամուտ	-	30,704
Վարձակալությունից եկամուտ	44,618	31,929
Պաշարների ավելցուկից եկամուտ	76,889	-
ՀՄ-ների վաճառքից եկամուտ	2,663	-
Այլ եկամուտներ	39,865	35,516
	234,503	170,355

14 Շահութահարկի գծով ծախս

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ընթացիկ հարկ	-	(77)
Հետաձգված հարկ	16,268	69,768
	16,268	69,691

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Շահույթ մինչև հարկումը	(12,018)		(62,147)	
Շահութահարկ 18% (2021թ. 18 տոկոս)	(2,163)	18.00	(11,186)	(18)
Չնվազեցվող ծախսեր	(14,105)	117.36	(58,505)	(94.14)
Շահութահարկի գծով ծախս	(16,268)	135.36	(69,691)	(112.14)

Հետաձգված հարկերի շարժը հետևյալն է՝

Հազար դրամ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Տարեսկզբի մնացորդ	(166,257)	(236,025)
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված	(642,588)	-
Տարվա արդյունքում ճանաչված փոխհատուցում	16,268	69,768
Տարեվերջի մնացորդ	(792,577)	(166,257)

2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար հետաձգված հարկերը խմբավորում են հետևյալ կերպ.

Հազար դրամ	2022թ. հունվարի 1	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված	Տարվա արդյունքում ճանաչված	2022թ. դեկտեմբերի 31
<i>Հետաձգված հարկային ակտիվներ</i>				
Դեբիտորական պարտքեր	191	-	506	697
Արձակուրդի պահուստ	7,885	-	(209)	7,676
	8,076	-	297	8,373
<i>Հետաձգված հարկային պարտավորություն</i>				
Հիմնական միջոցներ	(174,333)	(642,588)	15,971	(800,950)
Զուտ արդյունք	(166,257)	(642,588)	16,268	(792,577)

2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար հետաձգված հարկերը խմբավորում են հետևյալ կերպ.

Հազար դրամ	2021թ. հունվարի 1	Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված	2021թ. դեկտեմբերի 31
<i>Հետաձգված հարկային ակտիվներ</i>			
Դեբիտորական պարտքեր	-	191	191
Արձակուրդի պահուստ	-	7,885	7,885
	-	8,076	8,076
<i>Հետաձգված հարկային պարտավորություն</i>			
Հիմնական միջոցների մաշվածություն	(236,025)	61,692	(174,333)
Զուտ արդյունք	(236,025)	69,768	(166,257)

15 Ֆինանսական գործիքներ

15.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի, ֆինանսական պարտավորության և բաժնային գործիքի յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.12-ում:

15.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված մնացորդները վերաբերում են ակտիվների և պարտավորությունների հետևյալ կատեգորիաներին.

Ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ

	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
<i>Դեբիտորական պարտքեր</i>		
Առևտրային դեբիտորական պարտքեր	68,940	49,760
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	168,527	380,638
	237,467	430,398

Ֆինանսական պարտավորություններ

Հազար դրամ

	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Անորոշված արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորություններ		
Առևտրային կրեդիտորական պարտքեր	72,545	107,265
	72,545	107,265

16 Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Հիմնադրամն իր բնականոն գործունեության ընթացքում ենթարկվում է շուկայական (որը ներառում է արտարժույթային), պարտքային և իրացվելիության ռիսկերի:

16.1 Ֆինանսական ռիսկի գործոններ

ա) Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը Հիմնադրամի եկամտի կամ նրա ֆինանսական գործիքների արժեքի փոփոխության ռիսկն է շուկայական գների, այդ թվում փոխարժեքի դրույքների, տոկոսադրույքների և բաժնետոմսերի գների փոփոխության արդյունքում: Շուկայական ռիսկի կարևորագույն նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն է, որը թույլ կտա պահպանել այս ռիսկին ենթարկվածության աստիճանը ընդունելի սահմաններում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

բ) Արտարժույթային ռիսկ

Հիմնադրամը գործարքներ է իրականացնում արտարժույթով, հետևաբար ենթարկվում է արտարժույթային ռիսկին: Արտարժույթի փոխարժեքային տատանումներից կախվածությունը առաջանում է նվիրատվություններից:

գ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Հիմնադրամը ֆինանսական կորուստներ կարող է կրել:

Հաշվետու ամսաթվի դրությամբ նշանակալի պարտքային ռիսկի կենտրոնացում առկա չէ: Առավելագույն պարտքային ռիսկը ներկայացված է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ յուրաքանչյուր ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքով:

դ) Իրացվելիության ռիսկ

Հիմնադրամը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ պահելով բավարար դրամական միջոցներ և դրանց համարժեքներ, ինչպես նաև բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ ժամանակին գործառնական պարտավորությունները մարելու նպատակով:

17 Իրական արժեք

Հիմնադրամը սկզբնական ճանաչումից հետո իրական արժեքով չափվող ակտիվները և պարտավորությունները դասակարգում է 1-ից մինչև 3-րդ մակարդակներում՝ հիմնվելով իրական արժեքի դիտարկելիության աստիճանի վրա: Այս երեք մակարդակները ներկայացված են ստորև.

- 1-ին մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են նմանատիպ ակտիվների կամ պարտավորությունների ակտիվ շուկաներում գնանշվող գներից (չճշգրտված),
- 2-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներից, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող),
- 3-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են գնահատման հնարքների միջոցով, որոնք ներառում են ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

18 Պայմանականություններ

18.1 Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները, ինչպես նաև իրավական, հարկային և օրենսդրական համակարգերի զարգացումը շարունակական բնույթ են կրում: Հայաստանի տնտեսության կայունությունը և զարգացումը մեծապես կախված է այս փոփոխություններից: Կառավարությունը հաստատել է արդյունավետ կառավարման իր հանձնառությունը, որը ենթադրում է հակակոռուպցիոն ջանքեր, թափանցիկություն և հաշվետվողականություն:

Վերոնշյալ իրադարձությունները կարող են հետագայում էական ազդեցություն ունենալ Հիմնադրամի ապագա գործունեության և ֆինանսական կայունության վրա, որոնց ամբողջական հետևանքները դժվար է կանխատեսել ներկա պահին: Ապագա տնտեսական և քաղաքական իրավիճակը և վերջիններիս ազդեցությունը Հիմնադրամի գործունեության վրա կարող են տարբերվել Հիմնադրամի ղեկավարության ներկա սպասումներից:

18.2 Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման ներկա փուլում ապահովագրության շատ տեսակներ զարգացման սկզբնական փուլում են և լայնորեն չեն կիրառվում: Սա է պատճառը, որ Հիմնադրամն ապահովագրված չէ գործունեության ընդհատման, ակտիվների կորստի կամ այլ անձանց կողմից պարտավորությունների չկատարման հետևանքով վնասներ կրելու իրադարձություններից: Քանի դեռ Հիմնադրամն ապահովագրված չէ համապատասխան ռիսկերից, առկա է ակտիվների կորստի կամ ոչնչացման վտանգ, ինչը կարող է անբարենպաստ ազդեցություն ունենալ նրա գործունեության և ֆինանսական վիճակի վրա: Բացառություն են կազմում սեփականատերերի կողմից ավտոմեքենաների պարտադիր ապահովագրությունները, որոնք հաստատվում են վթարի դեպքում երկրորդ կողմին պատճառված վնասները:

18.3 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է և աչքի է ընկնում օրենսդրական հաճախակի փոփոխություններով, հատկապես մարմին արտադրության վերաբերյալ:

են հակասական կամ տարրնթերցումների տեղիք տալ: Հարկային մարմինները կարող են ստուգումների արդյունքում տույժ, տուգանքներ նշանակել: Նշված հանգամանքները կարող են առաջացնել նշանակալի հարկային ռիսկեր: Հիմնադրամի ղեկավարությունը վստահ է, որ իր հարկային պարտավորությունները հաշվարկել է պատշաճ կերպով հիմնվելով ՀՀ հարկային օրենսդրության իր մեկնաբանությունների վրա: Մակայն հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս հիմք ընդունած մեկնաբանություններից, և եթե դրանք հաստատվեն, ապա դրանց ազդեցությունը կարող է նշանակալի լինել:

18.4 Շրջակա միջավայրի հետ կապված խնդիրներ

Ղեկավարության համոզմամբ Հիմնադրամը բավարարում է շրջակա միջավայրի հետ կապված Կառավարության պահանջները, և վստահ է, որ Հիմնադրամը շրջակա միջավայրի հետ կապված ընթացիկ էական պարտավորություններ չունի: Այնուամենայնիվ, Հայաստանի Հանրապետությունում, շրջակա միջավայրի վերաբերյալ օրենսդրությունը զարգացման փուլում է, և դրա հավանական փոփոխություններն և օրենսդրության մեկնաբանություններն ապագայում կարող են էական պարտավորություններ առաջացնել:

18.5 Դատական հայցեր

2020թ. ղեկավարության կողմից Հիմնադրամի հաշվապահական գրանցումների ուսումնասիրությունից պարզ է դարձել, որ բացակայող հիմնական միջոցները և պաշարները հաշվառվել են կոնկրետ աշխատակիցների անվամբ, ովքեր հաշվառման տվյալների համաձայն հանդիսացել են նյութական պատասխանատու:

Աշխատակիցների ներկայացված գեկուցագրերից հետևում է, որ մինչև 2019թ. Հիմնադրամում իրականացված գույքագրման գործընթացը կրել է ձևական բնույթ, քանի որ բացակայող միջոցները մինչ օրս հաշվառված են Հիմնադրամի հաշվեկշռում որպես առկա գույք: Հիմնադրամում բացակայող հիմնական միջոցների և պաշարների հաշվեկշռային արժեքը կազմում է մոտ 100,000 հազ.դրամ (դեռևս իրականացվում են գումարի ճշգրտման աշխատանքներ): Հիմնադրամի կողմից համապատասխան նյութերը փոխանցվել են իրավապահ մարմիններին:

19 Հաշվետու ամսաթվից հետո տեղի ունեցող դեպքեր

2022թ. Ուկրաինական հակամարտությունը շատ արագ տարածվեց, ինչը մեծ ազդեցություն ունի և դեռևս կունենա ամբողջ աշխարհի վրա:

Ռուբլու արժեզրկումը ռուբլով արտահայտված դրամական փոխանցումների վրա էական ազդեցություն չի ունենա: Փոխարենը դա կազդի այդ փոխանցումների դոլարային արտահայտության վրա: Բնականաբար ԱՄՆ դոլարով արտահայտված դրամական փոխանցումները որոշակիորեն կնվազեն: Պատմականորեն ՀՀ տնտեսությունը մի քանի անգամ բախվել է նման ցնցումների հետ: Ի տարբերություն նախորդ ժամանակների, ներկայումս Հայաստանի տնտեսությունը շատ ավելի քիչ է կախված դրամական փոխանցումների ծավալներից, իսկ ՌԴ կշիռը այդ դրամական փոխանցումներում զգալիորեն ավելի փոքր է: Կարծում ենք, որ դրամական փոխանցումների որոշակի կրճատումը բացասական կազդի ՀՀ ներքին պահանջարկի վրա, սակայն այդ ազդեցությունը գնահատում ենք ոչ շատ մեծ:

Վերոնշյալ իրադարձությունները կարող են հետագայում էական ազդեցություն ունենալ Հիմնադրամի ապագա գործունեության և ֆինանսական կայունության վրա, որոնց ամբողջական հետևանքները դժվար է կանխատեսել ներկա պահին: Ապագա տնտեսական և քաղաքական իրավիճակը և վերջիններիս ազդեցությունը Հիմնադրամի գործունեության վրա կարող են տարբերվել Հիմնադրամի ղեկավարության ներկա սպասումներից:

Տվյալ ֆինանսական հաշվետվությունները չեն արտացոլում վերը նկարագրվածի հնարավոր ապագա ազդեցությունը Հիմնադրամի գործունեության վրա:

20 Գործարքներ կապակցված կողմերի հետ

20.1 Վերահսկողություն

Հիմնադրամի կառավարման և բարձրագույն հսկողություն իրականացնող մարմինը հոգաբարձուների խորհուրդն է:

20.2 Գործարքներ ղեկավարության հետ

Տարվա ընթացքում հիմնական ղեկավար անձնակազմը ստացել է ստորև ներկայացված վարձատրությունը.

Հազար դրամ	2022թ.	2021թ.
Աշխատավարձ	14,569	32,885